# ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱ ԹԵՐԹԻԿ

**«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ապահովագրում է Ձեր շարժական գույքն իր գործընկեր «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ում**

**Ապահովագրության օբյեկտներ՝**

- էլեկտրական տեխնիկա, այդ թվում՝ համակարգիչներ,
- սանտեխնիկա,
- մարտկոցներ,
- կահույք:

**Ձեր շարժական գույքը (այսուհետ՝ գույք) ապահովագրված է հետևյալ ռիսկերից*՝**

- Հրդեհի հետևանքով հասցված վնասից,
- Պայթյունի ազդեցության հետևանքով հասցված վնասից,
- Կայծակի հարվածից հասցված վնասից,
- Ջրի ազդեցության հետևանքով հասցված վնասից,
- Մեխանիկական ազդեցության հետևանքով հասցված վնասից,
- Տարերային աղետների ազդեցության հետևանքով հասցված վնասից,
- Կոտրանքով գողությամբ հասցված վնասից,
- Ավազակության հետևանքով հասցված վնասից,
- Երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով հասցված վնասից,
- էլեկտրական սարքավորումների վթարի հետևանքով հասցված վնասից (միայն էլեկտրական տեխնիկայի դեպքում):

**Ապահովագրության վկայագրի գործողության ընթացքում ապահովագրված գույքի սեփականատերը պարտավոր է անհապաղ գրավոր ծանուցել Ապահովագրական ընկերությանն այն հանգամանքների փոփոխության մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացման վրա, հակառակ պարագայում Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի մերժել հայտը:**

**Ռիսկի աստիճանի փոփոխության վրա ազդող հանգամանքներ են համարվում՝**

- Գույքի օտարումը, գրավադրումը, վարձակալության տրամադրումը,
- Գույքի մասնակի կամ լրիվ փոփոխությունը, վերաձևափոխումը,
- Գույքի վնասումը կամ ոչնչացումը, անկախ այն հանգամանքից, թե տվյալ վնասը ենթակա է հատուցման, թե ոչ,
- Գույքի համարանշված մասերի փոփոխությունը,
- Անվտանգության, վերահսկողության կամ հակահրդեհային համակարգերի փոփոխությունը կամ անջատումը և այլն:

**Ապահովագրությունը գործում է միայն ՀՀ և ԼՂՀ տարածքում:**

**Ապահովագրական պատահարներից բացառությունները*՝**

Ապահովագրական պատահար չեն համարվում՝

- ջերմային վերամշակման ընթացքում գույքին հասցված վնասը,
- սարքավորման արտադրման և/կամ մոնտաժման կամ տեղադրման ժամանակ թույլ տրված սխալների հետևանքով գույքին հասցված վնասը,
- գործարկման-փորձարկման ժամանակ թույլ տրված սխալների հետևանքով գույքին հասցված վնասը,
- բնական մաշվածությունը, կոռոզիայի ազդեցությունը, ապրանքային արժեքի կորուստը, արտադրական (գործարանային) խոտանը,
- գույքի դետալների վերանորոգումը կամ փոխարինումը, եթե դրանց վնասումը ապահովագարական պատահարի արդյունք չէ, կամ աշխատանքների իրականացումը, որոնց տեխնոլոգիական անհրաժեշտությունը չի եղել,
- էլեկտրոնային տվյալներին և/կամ ծրագրերին (այդ թվում՝ համակարգչային) պատճառված վնասը, ծրագրային սխալների կամ ծրագիր ոչ արտոնված մուտք գործելու հետևանքով պատճառված վանսը,
- խոնավության, բորբոսի, գոլորշիների ազդեցության հետևանքով պատճառված վնասը, ջերմաստիճանի կամ ջերմային ռեժիմի չպահպանման, փոփոխման հետևանքով հասցված վնասը,
- գույքի վարձակալության պայմանագրով վարձակալի գործողությունների (անգործության) արյունքում առաջացած վնասը կամ կորուստը,
- բաց թողնված օգուտը, վարձակալված գույքի օգտագործման վճարը, գույքի օգտագործման անհնարինության հետևանքով առաջացած ծախսերը և այլն,
- վնաս, որը հասցվել է Գույքի սեփականատիրոջ (Ապահովագրված անձի) կամ նրա հարազատների կողմից կամ մասնակցությամբ,
- ապահովագրված գույքի ներկաշերտի վնասվածքը, քերծվածքները, բծերը և այլն:

**Չհատուցվող գումարը (ֆրանշիզան) կազմում է ապահովագրական գումարի 1 (մեկ) տոկոսը, սակայն ոչ պակաս, քան 5000 (հինգ հազար) ՀՀ դրամը:**

**Ի՞նչ պետք է անել ապահովագրական պատահարի դեպքում՝**

- Սահմանափակել գույքի վնասվածքի հետագա տարածումը,
- Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց և հայտնի դառնալու պահից հետո անհապաղ հայտնել Ապահովագրական ընկերությանը՝ զանգահարելով +374 (10) 59 21 21 հեռախոսահամարներով և կատարել Ապահովագրողի կողմից տրված հրահանգները,
- Կախված ապահովագրական պատահարի բնույթից՝ զանգահարել համապատասխան մարմիններին/կառուցվածքային ստորաբաժանումներին (Ոստիկանություն, Հրշեջ ծառայություն, և այլն),
- Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելուց հետո ապահովագրական պատահարի օրվանից 30 օրվա ընթացքում ներկայացնել հատուցման մասին գրավոր դիմում-պահանջ, հակառակ պարագայում Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի մերժել հայտը,
- Վնասված անշարժ գույքը թողնել անփոփոխ վիճակում՝ Ապահովագրողի կողմից զննություն անցկացնելու նպատակով,
- Մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել ապահովագրված գույքի վերանորոգման որևէ աշխատանք, պահպանել վնասված գույքի մասերը կամ մնացորդները:

**Շարժական գույքի ապահովագրության վկայագիրը դադարում է գործել վարկառուի վարկային պարտավորությունների կատարման (վարկի ամբողջական մարման) պահից և չի վերակնքվում վարկային պայմանագրով նախատեսված դեպքերում:**

*Ապահովագրական պայմանագրի ամբողջական ռիսկերին, բացառություններին ինչպես նաև հատուցման ընթակարգին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ՝ այցելելով ստորև նշված կայքը և ընթերցելով 28.06.13թ. հաստատված Հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության կանոնները:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50
Հեռ.՝ (+374 10) 59-21-21
Կայք՝ www.ingoarmenia.am